

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՌՈՒՄԻՆԱՀԱՅ ԹԵՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Սույն թվականի նոյեմբերի 11-ին Բուխարեստի հայոց ս. Հրեշտակապետաց եկեղեցում գումարվում է ռումինահայ թեմի պատգամավորական ժողովը՝ նախագահությամբ առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանի, Ռումինիայի հայ 13 համայնքների 17 պատգամավորների և մեծ թվով պաշտոնական հրավիրյալների:

Պատգամավորական ժողովը բացվում է առաջնորդ սրբազանի աղոթքով:

Ժողովի օրակարգում էր թեմական առաջնորդի և թեմական խորհրդի մեկամյա գործունեության զեկուցագրերը, ինչպես և թեմական խորհրդի նոր կազմի ընտրությունը:

Հատենի ժողովո ընթերցվում են առաջնորդ սրբազանի և թեմական խորհրդի միամյա գործունեության տեղեկագրերը, որոնք գոհունակությամբ և գնահատանքով են ընդունվում:

Ապա ժողովն ընտրում է նոր թեմական խորհուրդ՝ հետևյալ կազմով.

Դոկտ.-պրոֆ. Գ. Բամբուքճյան՝ Ա ատենապետ.

Փաստաբան Բ. Կարապետյան՝ Բ ատենապետ.

Դատախազ Ալեքսանդր Սիլվյան՝ անդամ.

Նկարիչ Հրանտ Ավագյան՝ անդամ.

Պրոֆ. Օննիկ Պետիկյան՝ անդամ.

Փաստաբան Արամ Հակոբ՝ անդամ.

Ինժեներ Բ. Նալբանդյան՝ անդամ.

Ինժեներ Ե. Ժամկոչյան՝ անդամ:

Ընտրվում են նաև թեմական խորհրդի լրացուցիչ անդամներ.

Նկարիչ Չիկ Տամատյան.

Ինժեներ Արամայիս Սիմոն.

Հակոբ Ասլանյան.

Կարապետ Կարապետյան.

Գարուն Մարտիկյան.

Ի պաշտոնե թեմական խորհրդի նախագահն է առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը:

Ընտրություններից հետո Ռումինիայի թեմական պատգամավորական ժողովը Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսին հղում է հետևյալ հեռագիրը.

«Ռումինահայ թեմական պատգամավորական ժողովը, գումարված այսօր, Բուխարեստի հայոց Մայր եկեղեցու կամարների ներքո, խնդրում է Ձեզ, շատ սիրելի Հայրապետ, ընդունել արտահայտությունը իր հավատարմության և որդիական սիրո զգացումների, միաժամանակ հանձն առնելով ծառայել նաև հետ այսու հայ առաքելական եկեղեցու հնավանդ սիրո և եղբայրության ավանդություններին Ձերդ Սրբության իմաստուն հայրական ղեկավարության ներքո»:

Ռումինահայ թեմական պատգամավորական ժողովի հեռագրին ի պատասխան Վեհափառ Հայրապետը ողջունում է ընտրությունը նոր թեմականների և Իր հայրական օրհնությունն է ուղարկում հետևյալ հեռագրով՝ հանուն տ. Տիրայր եպիսկոպոսի.

«Հայրական սիրով կողջունենք տիրախնամ թեմիդ պատգամավորական ժողովը՝ աստվածային օրհնություն և օգնականություն հայցելով մասնակից բոլոր պատգամավորներուն՝ ի շինություն ձեր եկեղեցական կյանքի և ի մխիթարություն հավատացյալ ժողովրդի:

Թող Աստված անսասան պահե ձեր թեմը ռումինական բարեխնամ երկրի հովանիի ներքև՝ խաղաղության մեջ:

ՎԱԶԳԵՆ Ա
կաթողիկոս Ամենայն Հայոց»

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է նորընտիր թեմա-

կան խորհրդին և արտագինս մաղթում նրան եկեղեցաշեն և ազգօգուտ գործունեություն:

ՓԱՐԻԶԻ՝ ՍԵՎՐԻ ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՆՈՐ ՇԵՆՔԻ ԲԱՑՈՒՄԸ

Սույն թվականի նոյեմբերի 18-ին տեղի է ունեցել Փարիզում՝ Սևրի Սամվել Մուրադյան հայկական վարժարանի նոր շենքի բացումը՝ նախագահությամբ Վենետիկի Մխիթարյան միաբանության աբբահայր գերապայծառ Պողոս վարդապետ Անանյանի:

Այս առթիվ վարժարանի տեսուչ հ. Խորեն Տիլիզյանը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին է հղում հետևյալ գրությունը.

«Վեհափառ Տեր,

Երբ անցյալ տարի 15 հոկտեմբերին առաջին քարի հիմը կդնեինք նոր շենքի մը վարժարանիս կողքին, Ձերդ հայրապետական օրհնությամբ և ձեռամբ Սերովբե արքեպ. Մանուկյանի, այսօր սրտի անհուն ուրախությամբ է, որ կավետեմք Ձեզի, թե ամսույս 18-ին, ժամը 16-ին, տեղի պիտի ունենա բացման արարողությունը՝ ձեռամբ միաբանությանս ընդհանրական աբբահոր՝ գերապայծառ Պողոս վարդապետ Անանյանի, ներկայությամբ բազմաթիվ եկեղեցական և քաղաքական իշխանություններու:

Բացման արարողութենեն հետո պիտի կատարվի նաև վարժարանիս Փարիզ հիմնարկության 125-ամյակի հանդիսությունը:

Այս ուրախարար առիթով կխնդրենք վերստին Ձեր հայրապետական օրհնությունը վարժարանիս առաքելության մեր սիրելի աշակերտներուն, որպեսզի մանկության այս սիրելի օրրանը մնա միշտ կենսունակ և օգտաշատ հայ ազգին:

Հուսով ենք, թե օր մը Ձեզ ևս պիտի տեսնենք մեր մեջ»:

Վեհափառ Հայրապետը, գնահատելով սույն վարժարանի կրթական գործունեությունը, հղում է իր ողջույնը վարժարանի ղեկավարությանը, դասախոսական կազմին և ուսանողությանը հետևյալ օրհնության հեռագրով.

«Ջերմ գնահատանքով կողջունենք նորակառույց ձեր վարժարանի բացումը: Մայր հայրենիքեն և ս. Էջմիածնեն օրհնություն ձեր ազգանվեր կրթական առաքելության, դասախոսական կազմին և աշակերտության:

Թող Աստված մնա ձեզ միշտ օգնական:

ՎԱԶԳԵՆ Ա.
կաթողիկոս Ամենայն Հայոց»

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՄԱՀՎԱՆ 800-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՆԵՏԻԿԻ Ս. ՂԱԶԱՐ ՎԱՆՔՈՒՄ

Սույն թվականի նոյեմբերի 25-ին Վենետիկի ս. Ղազար վանքում հանդիսավորապես նշվելու է ս. Ներսես Շնորհալու հիշատակը՝ նրա մահվան 800-ամյակի առթիվ:

Այս կապակցությամբ Մխիթարյան միաբանության ընդհանուր քարտուղար հայր Ներսես Տեր-Ներսիսյանը Վեհափառ Հայրապետին է ուղարկել հետևյալ հեռագիրը.

«Հայրապետական Ձեր կոնդակի ոգիով նոյեմբերի 25-ին մեծահանդես պիտի տոնենք ս. Ներսես Շնորհալու ութհարյուրամյակը՝ մասնակցությամբ երկու կարդինալներու, եպիսկոպոսներու, Իտալիո հայության և բազում օտար մտավորականներու: Ցանկալի է Ձերդ Վեհափառության հոգևոր ներկայությունը հեռագիր շնորհապարգև պատգամով, որ բացառիկ նշանակություն պիտի տա հանդիսությանը:

Հաճեցեք ընդունել աբբահոր՝ Անանյանի և բոլոր միաբաններու ամենախորին մեծարանքի զգացումները»:

Այս առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Իր հետևյալ օրհնության գիրն է հղում Վենետիկի Մխիթարյան Ուխտի աբբահորը.

«Ս. Էջմիածնեն հրճվանքով կառաքենք Մեր օրհնությունը ձեր հանդիսություններու՝ նվիրված Ամենայն Հայոց Շնորհալի Ներսես Հայրապետի սուրբ հիշատակին, անոր հագեշեն մեծ ժառանգության: Այս երջանիկ առիթով Մեր եղբայրական ողջույնը և սերը Ձերդ Գերապայծառության, հանդիսությանց մասնակցող բարձրապայծառ կարդինալ և եպիսկոպոս հայրերուն, ձեր Ուխտի ժրաջան միաբանության և ներկա համայն մեր սիրեցյալ ժողովուրդին:

Թող Աստված միշտ փառավոր պահե Շնորհալի Հայրապետի սրբազան երգն ու խոսքը՝ իբրև հավերժական առավոտ լուսո՝ մեր ժողովուրդի հոգևոր կյանքի:

«Ողջ լերուք զորացեալ սուրբ Հոգւով»:

ՎԱԶԳԵՆ Ա.
կաթողիկոս Ամենայն Հայոց»

[illegible]